Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓՈՐՁԱԳԵՏ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **«20» մայիսի 2019թ.**

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության "Զվարթնոց" միջազգային օդանավակայանի տարածքում կատարված հանցագործությունների քննության բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Հ.Խաչատրյանս, վերանայելով վարույթումս գտնվող թիվ 16200119 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

05.01.2019թ-ին՝ ժամը 02:15-ի սահմաններում, Գևորգ Մեսրոպի Միսակյանը և Արթուր Էդիկի Սահակյանը "Զվարթնոց" օդանավակայանի ժամանման սպասասրահի առաջին մուտքի դռների մոտ, տաքսի-ծառայություն մատուցելու շուրջ, վիճաբանել են միմյանց հետ, փոխադարձ հարվածներ հասցրել և տվել սեռական բնույթի հայհոյանքներ:

Փաստի առթիվ ՀՀ ոստիկանության ԵՔՎ "Զվարթնոց" օդանավակայանի գծային բաժնում նախապատրաստվել են նյութեր:

Նյութերի նախապատրաստման արդյունքում՝ 12.01.2019թ-ին որոշում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ Գ.Միսակյանի և Ա.Սահակյանի արարքներում հանցակազմի բացակայության հիմքով:

12.01.2019թ-ին նյութերն ուղարկվել են Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների դատախազություն՝ մերժման օրինականությունը ստուգելու համար:

21.01.2018-ին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների դատախազի կողմից որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու և դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 16200119 քրեական գործ հարուցելու մասին, որը նույն օրն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության "Զվարթնոց" միջազգային օդանավակայանի տարածքում կատարված հանցագործությունների քննության բաժին:

05.02.2019թ-ին Գևորգ Միսակյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

Նախաքննության ընթացքում պարզվել է նաև, որ մեղադրյալ Գևորգ Միսակյանը հաշվառված է "Զարիշատ /Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն" ՓԲ ընկերության հոգեբուժական կաբինետում՝ "Սիմպտոմատիկ էպիլեպսիա, վարքային փոփոխություններով" ախտորոշմամբ, որտեղից էլ ստացվել են վերջինիս ամբուլատոր քարտերը:

15.03.2019թ-ին քրեական գործով նշանակվել է դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր ամբուլատոր փորձաքննություն:

Նկատի ունենալով, որ նշված դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր ամբուլատոր փորձաքննություն կատարելու համար անհրաժեշտ է նաև հոգեբանական բնագավառի նեղ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 249-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի "Կիրառական հոգեբանության" ամբիոնի դոցենտ Լևոն Կարոյի Սարգսյանին ճանաչել փորձագետ:

2. Որոշման մասին հայտնել Լ.Սարգսյանին:

ՀԿԳ ավագ քննիչ **Հ. Խաչատրյան**

Որոշմանը ծանոթացա

_____ « » 05. 2019թ.